«ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից (www.smeinvest.am) իրականացվող ֆինանսական աջակցության ծրագրեր

**Ֆինանսավորումն իրականացվում է բացառապես ՀՀ դրամով:*

Ֆինանսավորման հիմնական ոլորտները

- արդյունաբերություն,
- գյուղատնտեսություն,
- տեղեկատվական տեխնոլոգիաներ,
- տուրիզմ
- ծառայությունների մատուցում և սպասարկում:

Ֆինանսավորման գործընթացում նախապատվությունը տրվում է

- նոր արտադրության կազմակերպմանը և արտադրության ընդլայնմանը,
- ներմուծման փոխարինմանը, արտահանվող կամ արտահանման ներուժ ունեցող արտադրության կազմակերպմանը,
- նոր տեխնոլոգիաների կիրառմամբ կամ նորարարությունների ներդրմամբ կազմակերպվող արտադրությանը,
- նոր կամ լրացուցիչ աշխատատեղերի ստեղծմանը, առկա աշխատատեղերի պահպանմանը:

Վարկավորում

Գումարը

- Փոքր և միջին չափի վարկեր 50 մլն ՀՀ դրամ ներառյալ,
- Խոշոր չափի վարկեր սկսած 50 մլն ՀՀ դրամից:

Տոկոսադրույքը

Անվանական տոկոսադրույք՝ 12.5-15%

Տրամադրում

- ՀՀ ռեզիդենտ առևտրային իրավաբանական անձանց
- Անհատ ձեռնարկատերերին:

Վարկերը տրամադրվում են մինչև 5 տարի մարման ժամկետով՝ մինչև 24 ամիս արտոնյալ ժամանակահատվածի և վարկի վերջնաժամկետի երկարաձգման հնարավորությամբ:

Վարկի մարման կարգը

Վարկերը սովորաբար մարվում են վարկի մայր գումարի հավասարաչափ ամսական մարումների միջոցով:

Վարկի ապահովվածություն

Գրավի առարկա կարող են հանդիսանալ

- անշարժ գույքը (բնակարան, բնակելի տուն, առանձնատուն, տարածք, շենք-շինություն, հողամաս և այլն),
- շարժական գույքը (բեռնատար և մարդատար ավտոմեքենաներ, գյուղատնտեսական տեխնիկա, սարքավորումներ և այլն),
- շրջանառու միջոցներ (պատրաստի արտադրանք, հումք, նյութեր և այլն),
- պետական և կորպորատիվ արժեթղթեր,
- ցպահանջ և ժամկետային դրամական միջոցները (ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո),
- ՀՀ օրենսդրությամբ թույլատրվող օտարման ենթակա իրավունքները,
- ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գույք:

Գրավի առարկա չեն կարող հանդիսանալ

- թանկարժեք և կիսաթանկարժեք քարերը,
- ոսկյա իրեր, ոսկյա դրամանիշերը,
- ՀՀ գործող օրենսդրությամբ սեփականաշնորհման, սեփականության, ինչպես նաև տնօրինման, օգտագործման և օտարման համար արգելված արժեքները,
- շրջանառությունից հանված գույքը,
- պատմական և մշակութային արժեք ներկայացնող գույքը:

Վարկային պարտավորության ապահովման միջոց կարող են հանդիսանալ նաև՝

- պետական երաշխիքները կամ երաշխավորությունները,
- բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների կողմից տրված երաշխիքները,
- ֆինանսապես հուսալի համարվող իրավաբանական անձանց կողմից տրված երաշխավորությունը,
- պայմանագրերը և այլ հիմնավոր փաստաթղթերը, որոնցից ակնկալվող դրամական հոսքերը հիմնավորում են վարկի վերադարձելիությունը,
- ֆիզիկական անձանց կողմից տրված երաշխավորությունը:

Վարկ/գրավի արժեք հարաբերության առավելագույն ցուցանիշ

Անշարժ գույք (ք. Երևան)	մինչև 70% ներառյալ
Անշարժ գույք (ՀՀ մարզեր)	մինչև 60% ներառյալ
Տրանսպորտային միջոցներ	մինչև 60% ներառյալ
Սարքավորումներ	մինչև 50% ներառյալ
Շրջանառու միջոցներ	մինչև 50% ներառյալ
Դրամական միջոցներ	մինչև 90% ներառյալ
Այլ գրավ	Վարկային կոմիտեի որոշմամբ

Վարկային կազմակերպության համար ցանկալի տարբերակ է, երբ մեկ վարկի գծով գրավադրվող ընդհանուր գրավի առնվազն 50%-ը իրենից ներկայացնում է անշարժ գույք:

Վարկատեսակների հակիրճ բնութագիր

Պրոդուկտի տեսակը	*Ապահովվածություն*
• Ստանդարտ վարկեր	անշարժ և շարժական գույքեր, բանկային երաշխիք, երաշխավորություն
• «Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամի երաշխավորությամբ վարկեր	հիմնադրամի կողմից տրամադրվող երաշխավորություն (որը չի կարող գերազանցել վարկի մայր գումարի 70%-ը ու 15 մլն դրամը) և հաճախորդի կողմից առաջարկվող գրավ
• նորարարական գործարար գաղափարներ ներդնող, նոր տեխնոլոգիաներ կիրառող, արտահանման ներուժ ունեցող տնտեսվարողներին «Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամի երաշխավորությամբ մինչև 50 մլն ՀՀ դրամ գումարի չափով վարկեր	ամբողջությամբ ապահովված է հիմնադրամի երաշխավորությամբ
• Նախաարտահանման ֆինանսավորում*	արտահանման պայմանագրից ակնկալվող դրամական հոսքեր, որն ապահովագրված է «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի կողմից

:

***»Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ հետ համագործակցության շրջանակներում նախարտահանման ֆինանսավորմամբ տրամադրվող վարկերի պայմանները**

Վարկի նպատակ
Շրջանառու միջոցների ձեռքբերում արտահանման պայմանագրի կատարման համար
Տրամադրման ժամկետ
Մինչև 18 ամիս
Վարկի ապահովագրություն
Վարկերն ապահովագրվում են «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի կողմից

Սուբսիդավորում

Արտահանման ուղղվածություն ունեցող մշակող արդյունաբերության ոլորտի և/կամ ճարտարագիտական ծառայություններ մատուցող կազմակերպություններին տրամադրվող վարկերի տոկոսադրույքները մասնակի սուբսիդավորվում են Հայաստանի զարգացման հիմնադրամի կողմից: Տվյալ ոլորտներին տրամադրվող վարկերի առաջին երկու տարվա

ընթացքում վճարման ենթակա տոկոսագումարները սուբսիդավորվում են **3** տոկոսային կետին համարժեք գումարի չափով, իսկ Հայաստանի Հանրապետության 2015թ. հունվարի 15-ի՝ «Մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածքներ ունեցող այն սահմանամերձ համայնքների ցանկը հաստատելու մասին, որտեղ իրականացվող գործունեությունն ազատվում է հարկերից» N 30-Ն որոշմամբ հաստատված ցանկում ներառված սահմանամերձ համայնքներում գործունեություն իրականացնող կազմակերպություններին **7** տոկոսային կետին համարժեք գումարի չափով:

Լիզինգ

Լիզինգները տրամադրվում են՝

- համայնքներին,
- ՀՀ ռեզիդենտ առևտրային իրավաբանական անձանց,
- անհատ ձեռնարկատերերին,
- գյուղացիական տնտեսություններին, ինչպես նաև մշտական եկամտի աղբյուր ունեցող ֆիզիկական անձանց:

Մարման ժամկետ

- ՍԿ-5ՄԵ-1 Նիվա էֆֆեկտ մակնիշի կոմբայնների համար՝ մինչև 10 տարի մարման ժամկետով,
- «Բելառուս» ՄՏԶ 82.1 մակնիշի տրակտորների համար՝ մինչև 6 տարի մարման ժամկետով,
- այլ գյուղատնտեսական տեխնիկայի համար (խոտի հավաքիչ-մամլիչ, խոտհնձիչ և այլն)՝ մինչև 3 տարի մարման ժամկետով:

Ընդ որում տրակտորներ և այլ գյուղտեխնիկա միևնույն Շահառուին միաժամանակ լիզինգով տրամադրելու դեպքում առավելագույն ժամկետը կարող է սահմանվել մինչև 6 տարի:

Կանխավճար

Լիզինգի առարկայի ձեռքբերման գնի առնվազն 20%-ի չափով,

Անվանական տոկոսադրույք

ՀՀ դրամով՝ տարեկան 9-12%,

Լիզինգի մարման կարգը

Վարձակալի կողմից վարձավճարի վճարումները սովորաբար իրականացվում են ամսական հավասարաչափ անուիտետային եղանակով: Մասնավոր դեպքերում, հաշվի առնելով գործունեության առանձնահատկությունները, սեզոնայնությունը և այլ պայմաններ, «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն կարող է սահմանել դադարի շրջաններ (արտոնյալ

ժամանակահատված)՝ այդ շրջաններում անուիտետային եղանակով հաշվարկված տոկոսագումարներն ապագայում վճարման ենթակա վարձավճարներին ավելացնելու պայմանով: Ընդ որում վարձավճարների գրաֆիկը կազմելիս սահմանվում է, որ վարձավճարները վճարվեն լիզինգի տրամադրումից հետո յուրաքանչյուր տարվա ընթացքում առնվազն 6 հավասարաչափ մասնաբաժիններով: Դադարի շրջաններ սահմանվում են լիզինգի տրամադրման չորրորդ ամսվանից սկսած:

Լիզինգի ապահովվածություն

Որպես լիզինգի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարման ապահովում կարող են հանդես գալ նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց երաշխավորությունները, ընդ որում ֆիզիկական անձ Շահառուների դեպքում անհրաժեշտ է առնվազն երկու անձանց կողմից տրված երաշխավորություն:

Լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման վճար՝

- տրակտորների և կոմբայնների համար՝ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ,
- կից սարքավորումների համար՝ 3000 (երեք հազար) ՀՀ դրամ:

Ապահովագրություն

Լիզինգի առարկան վարկային կազմակերպության հաշվին, լիզինգի պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում, ապահովագրվում է վնասվածքի և կորստյան ռիսկերից (կասկո):

<u>Երաշխիքների տրամադրում</u>

Երաշխիքները տրամադրվում են՝

- ՀՀ ռեզիդենտ առևտրային իրավաբանական անձանց,
- անհատ ձեռնարկատերերին:

Երաշխիքի տեսակները

- Մրցույթի մասնակցության երաշխիք,
- կանխավճարի ապահովման երաշխիք,
- պայմանագրի կատարման երաշխիք,
- որակի(հետավարտման երաշխիք),
- արտահանման երաշխիք: